AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

17 փետրվարի 2023 թվականի N ՑԲ-001-02/23

ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿ, ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԱԶԱՏ (C) ՇՈՒԿԱՅՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 2022 թվականի սեպտեմբերի 13-ի հայտը 563,070,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 112,614 հատ հասարակ (սովորական), անվանական բաժնետոմսերի հայտը՝ դրանք առևտրին թույլատրելու և բաժնետոմսերի ազատ (C) շուկայում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Առևտրին թույլատրման հանձնաժողովի կողմից 2023 թվականի փետրվարի 16-ին ներկայացված եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված բաժնետոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 23-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 70 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.52) կետի ե) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 563,070,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 112,614 հատ հասարակ (սովորական), անվանական բաժնետոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMARBKS10ER4 ծածկագիրը, առևտրին թույլատրել և ընդգրկել բաժնետոմսերի ազատ (C) շուկայում, ARBK հապավմամբ, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ բաժնետոմսերի ազատ (C) շուկայում համարվում են առևտրին թուլատրված Ընկերության ընդհանուր քանակով 1,873,345 հատ սովորական անվանական բաժնետոմսերը:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 22-ին:

0

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ **ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**